ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՓՈՐՁԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ



Փորձառության նկարագիրը փորձառության ընթացքում ուսանողի գործողությունները կամ ապահոված արդյունքները, փորձառության վայրի ղեկավարի և ամբիոնի փորձառության ղեկավարի դիտարկումներն արտացոլող հակիրճ հաշվետվություն է:

Փորձառության գնահատումը կազմակերպվում է փորձառության վայրից ներկայացված փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա:

Փորձառության նկարագիրը ոչ թե փորձառության գնահատման առանձին բաղադրիչ է, այլ **նախապայման**, որի առկայության դեպքում միայն կարող է կազմակերպվել ուսանողի փորձառության հաշվետվության պաշտպանությունը:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ

«Հիմնական արդյունքները» բաժնում ուսանողին անհրաժեշտ է 2-3 նախադասությամբ ներկայացնել տվյալ շաբաթվա ընթացքում փորձառության վայրում իրականացրած հիմնական աշխատանքները, հանձնարարականները և այլն:

Այնուհետև ուսանողին անհրաժեշտ է տպել փորձառության նկարագրի բոլոր էջերը և ներկայացնել փորձառության վայրի ղեկավարին՝ ստորագրության և կնքման:

Փորձառության վայրի և ամբիոնի ղեկավարներն, ըստ անհրաժեշտության, 2-3 նախադասությամբ կարող են ներկայացնել իրենց դիտարկումները, կարծիքներն ու դիտողությունները ուսանողին՝ փորձաոության նկարագրի վերջին էջում:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԿՆԻՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ուսանողին անհրաժեշտ է նախապես տեղեկացնել ամբիոնի կողմից նշանակված փորձառության վայրի ղեկավարին, ով կնիքի բացակայությամբ փորձառության վայրերի ցուցակը ներկայացնում է ՀՊՏՀ կարիերայի կենտրոն: